

Ամենէն նոր մասը, որ շինուած է Ի. դարուն սկիզբը, ծածկուած է ապակիէ գմբէթով մը: Նոր են երգիտները և երգիչներուն տեղը, ինչպէս նաև մուտքի դուռը, որ Գրաքովիոյ փողոցին վրայ կը նայի: Մայր եկեղեցին կը պարունակէ հին մեծ դանձեր, այսինքն պաշտամունքի առարկաներ, ծիսական զգեստներ, նկարներ, ևայլն, բայց ամենէն թանկարժէքն է ԺԻ. դարէն հայերէն աւետարան մը: Մագաղաթի վրայ ձևագիր մըն է ան, որուն չորս հարիւր էջերը զարդարուած են գեղեցիկ գիրերով և զմայլելի մանրանկարներով, որոնց վառ գոյնները անեղծ են մնացած:

Եկեղեցիին շրջակայքն ալ հինաուերց տեսք մ'առնի: Արևելեան կողմը կայ նեղ փոքրիկ անցք մը, ուր կը գտնուի Ս. Քրիստոփորի նուիրուած սրահ մը: Միւս կողմէն կը մտնուի ներքին բակի մը մէջ, որ մայր եկեղեցին կը բաժնէ վանքէն հայ Բենետիկոսեանց, որոնք հոն կը բնակին ԺԷ. դարէն ի վեր: Ոչ հեռու դէպի Սքարպքովքայի փողոցը տանող դուռնէն՝ կը գտնուի փոքրիկ բակ մը, ուր է պաշտամունքի առարկաներու խանութ մը, որ կը կրէ "Mons Pius" անունը:

Լեհաստանի մէջ պահուած հայկական պաշտամունքը քիչ կը տարբերի կաթոլիկ պաշտամունքէն: Եթէ ուշադրութեամբ հետեւինք հայկական պաշտամունքին, կրնանք նշմարել մանրամասնութեանց տարբերութիւններ: Առաջին տարբերութիւնն այն է որ պաշտամունքը հայերէն լեզուով կը կատարուի: Բայց գլխաւոր տարբերութիւնը ս. պատարագին մէջ է. նշխարն ու բաժակը աղօթքէն վերջն է որ կը բարձրացուն: Այդ ատեն է որ քահանան կ'օրհնէ ժողովուրդը: Աղօթքին խօսքերն ալ կը տարբերին կաթոլիկ աղօթքին խօսքերէն: Պէտք է աւելցնել նաև թէ, տարին երկու անգամ, ծնունդի տօնի նախորդ երեկոյին և աւագ շաբաթ օրուան երեկոյին կը մատուցուի ս. պատարագը:

Հայկական պաշտամունքին ուրիշ մէկ մասնաւորութիւնն ալ այն է որ մկրտութեան առթիւ ս. հաղորդութիւն կը տրուի. այս սովորութիւնը կայ սակայն արևելեան բոլոր միւս եկեղեցիներուն մէջ ալ:

Այս մայր եկեղեցիէն դատ, Լվովի մէջ

ուրիշ հին հայկական մատուռներ և թեմական եկեղեցիներ ևս կան ի Պրէձէձանի, Հորսքա, Քիւթի, Լիւջիէք, Ստանիսլավով, Սնիաթին, Թիզմէնիձա: Այս բոլոր եկեղեցիները կը կառավարուին արքեպիսկոպոսէ մը, որ պեան է հայ-կաթոլիկ պաշտամունքին ի Լվով:

Լեհաստանի միւս եկեղեցիներուն մէջ պէտք է յիշել Ստանիսլավովինը: Հայոց այս քաղաքին մէջ հաստատուելէն անմիջապէս վերջը, ԺԷ. դարուն երկրորդ կիսուն, սկսան հոն կառուցանել փայտաշէն եկեղեցի մը, որ ատեն մը ետքը այրեցաւ: Հայերը զայն վերակառուցին, այս անգամ քարաշէն: Դժբախտաբար այս երկրորդ եկեղեցին ևս այրեցաւ ԺԹ. դարուն առաջին կիսուն: Ի դարուն էր որ նորէն ձեռնարկուեցաւ անոր վերաշինութեան, և դեռ քանի մը տարի առաջ է որ աւարտեցաւ ան: Ստանիսլավովի եկեղեցին, ուրիշ շատ մը սրբարաններէ դատ, ունի նաև երկու գեղեցիկ խորաններ, զորս մասնաւորաբար կը մեծարեն հայերը, և որոնք նուիրուած են Ս. Կայիթայի և Ս. Անտոնի: Եկեղեցւոյ կողքին կայ մատենադարան մը և թեմական զիւանատուն մը, որ կը պարունակէ բաղմամբ ձեռագիրներ և հայկական վաւերագիրներ, ինչպէս նաև ծիսական զգեստներ և պաշտամունքի զանազան առարկաներ:

Պէտք է յիշել նաև Քիւթիի հայկական եկեղեցին: Փայտօշէն առաջին այրած ըլլալով, անոր տեղ շինուած է այժմ նոր մը, նշանաւոր՝ հրաշագործ պատկերով մը, որ Ս. Անտոնը կը ներկայացնէ:

ՊՐՈՒՆՍԼՈՒԱ ՔԷՕՔՐԻԻԼԵԱՆ

(Շարունակելի)



ՆՈՒՐՉՈՒՐԳ ԵՒ ԽՕՄՔ

Լուսազոյն կերպով շնորհաւ կ'ըսենք ո՛չ քի այն հ որուն մեջ մարդս աւելի հաւոյնք, քրատ, իշխանութիւն, պատիւ կամ հաւերա կը շահի, այլ այն՝ որուն մեջ մարդս աւելի մարդ կ'ըլլայ և կը կատարէ մարդկային պարտականութեան և օգտակար աշխատութեան մեծազոյն գումար: